# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՅԳԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբաց համայնք, ՀՀ
Շիրակի մարզ, գ. Այգաբաց, 11 փող. 5 շենք, Հեռ. (094) 81 49 67 ,
aygabats.shirak@mta.gov.am

N 12
*14 ապրիլ 2017թ.*

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀՈՎՍԵՓ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան
Ձեզ ենք ներկայացնում Շիրակի մարզի Այգաբացի համայնքի ավագանու 2017թվականի ապրիլի 10-ի թիվ 3 նիստի որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆԻԿ ՎԱՆԵՑՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբաց համայնք

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 7

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի ավագանու 2017թվականի ապրիլի 10-ի թիվ 3 նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքապետարանի աշխատակիցների 2017թվականի քանակը , հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու եվ համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 30 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին » թիվ 28 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի ավագանու 2017թվականի մարտի 1-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին» թիվ 6 որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի

նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին
3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի 2017 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին
4.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի Հայրենական Մեծ Պատերազմի  և Արցախյան պատերազմի մասնակիցներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԹՈՒՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
3. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՈՎՍԵՓ
4. ՄՍՐՅԱՆ ԳՆԵԼ
5. ՌՈՍՏՈՄՅԱՆ ԱՐՏԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆԻԿ ՎԱՆԵՑՅԱՆ**

10 ապրիլի 2017թվական
գ. Այգաբաց

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբաց համայնք

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 8

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 28 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի , «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի դրույթներով՝

համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքապետարանի աշխատակիցների 2017թվականի քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 30 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին » թիվ 28 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

Որոշման հավելվածի

1. 8-րդ կետի «հավաքարար » - պաշտոնային դրույքաչափը- «72807» թիվը փոխարինել «79633» թվով, պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ « 32,0» թիվը փոխարինել «35» թվով:

2. 9-րդ կետի « համակարգչային օպերատոր»- պաշտոնային դրույքաչափը- «78040» թիվը փոխարինել «79633» թվով, պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ « 32,0» թիվը փոխարինել «35»

թվով:
3. 6-րդ կետի «գրադարանավար » - պաշտոնային դրույքաչափը- «72807» թիվը փոխարինել «74172» թվով, պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ « 32,0» թիվը փոխարինել «32,6» թվով:
4. 7-րդ կետի «ակումբավար» - պաշտոնային դրույքաչափը- «72807» թիվը փոխարինել «74172» թվով, պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ « 32,0» թիվը փոխարինել «32,6» թվով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԹՈՒՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
3. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՈՎՍԵՓ
4. ՄՍՐՅԱՆ ԳՆԵԼ
5. ՌՈՍՏՈՄՅԱՆ ԱՐՏԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆԻԿ ՎԱՆԵՑՅԱՆ**

10 ապրիլի 2017թվականի
գ. Այգաբաց

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՅԳԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբաց համայնք

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 9

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի ԹԻՎ 6 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ,8-րդ հոդվածի 1-ին մասի,«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2017թվականի փետրվարի 6-ի թիվ 10 դրական եզրակացությունը՝

համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի , որով նախատեսվում է համայնքի վարչական սահմաններում գտնվող ,համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,1042 հեկտար

արոտը /կադաստրային ծածկագիր 08-011-0130-0001/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակություն,այդ հողամասում առկա օրվա կարգավորման ջրամբարի գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու համար:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի գյուղական համայնքի ղեկավար Սասունիկ Վանեցյանին՝
1)ապահովել հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը,
2)հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն
3.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի ավագանու 2017թվականի մարտի 1-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին» թիվ 6 որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԹՈՒՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
3. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՈՎՍԵՓ
4. ՄՍՐՅԱՆ ԳՆԵԼ
5. ՌՈՍՏՈՄՅԱՆ ԱՐՏԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆԻԿ ՎԱՆԵՑՅԱՆ**

10 ապրիլի 2017թվական
գ. Այգաբաց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբաց համայնք

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 10

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով՝

համայնքի ավագանին որոշում է՝

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի 2017թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԹՈՒՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
3. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՈՎՍԵՓ
4. ՄՍՐՅԱՆ ԳՆԵԼ
5. ՌՈՍՏՈՄՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆԻԿ ՎԱՆԵՑՅԱՆ

10 ապրիլի 2017թվական
գ. Այգաբաց

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Այգաբացի համայնքի
Ավագանու 2017թվականի ապրիլի 10-ի
թիվ 10 որոշման

1. Եկամուտների տեսակները

| Եկամուտների տեսակները | Հաշվարկային /հազար դրամ | փաստացի /հազար դրամ/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Հողի հարկ | 900.0 | 235.2 | 26.1 |
| Գույքահարկ շենք շինությունների | 0.5 | 0.2 | 40.0 |
| Գույքահարկ փոխադրամիջոցներ | 400.0 | 679.3 | 169.8 |
| Վարձակալության վարձավճար | 1316.5 | 30.1 | 2.3 |
| դոտացիա | 2572.0 | 2572.0 | 100.0 |
| Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ | | | |
| Մուտքեր տույժերից և տուգանքներից | | | |
| Այլ դոտացիաներ | | | |
| Տեղական տուրքեր | 90.0 | 10.0 | 11.1 |
| Վ արչական գանձումներ | | | |
| Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջ այլ եկամուտներ | . | | |
| ընդամենը | 5279.0 | 3526.8 | 66.8 |
| տարեսկզբի ազատ մնացորդ | 1712.4 | | |

2. Ծախսերի գծով՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

| Ծախսերի անվանումները | Հաշվարկային /հազար դրամ | փաստացի /հազար դրամ/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն | 5388.1 | 3255.8 | 60.4 |
| Տնտեսական հարաբերություններ | | | |
| Շրջակա միջավայրի պաշտպանություն | | | |
| Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | 833.3 | | |
| Հանգիստ և մշակույթ | 120.0 | | |
| Կրթություն | | | |
| Սոցիալական պաշտպանություն | 250.0 | | |
| Պահուստային ֆոնդ | 400.0 | 195.3 | 48.8 |
| ընդամենը | 6991.4 | 3451.1 | 49.4 |

3.Ծախսերի գծով՝ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման

| Ծախսերի անվանումը | Հաշվարկային /հազար դրամ | փաստացի /հազար դրամ/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Աշխատավարձ | 3550.0 | 3031.8 | 85.4 |
| Պարգևատրում | | | |
| Գործառ. և բանկային ծառ. ծախս. | 20.0 | | |
| Էներգետիկ ծառայություն | 100.0 | 67.7 | 67.7 |
| կոմունալ ծառայություն | | | |
| Կապի ծառայություն | 58.1 | 20.0 | 34.4 |
| Ապահովագրական ծախսեր | | | |
| գործուղումներ | 40.0 | | |
| Համակարգչային ծառայություն | | | |
| Տեղեկատվական ծառայություններ | 30.0 | | |
| Ընդ. Բնույթի այլ ծառայություններ | 130.0 | | |
| Մասնագիտական ծառայություններ | 140.0 | 23.0 | 16.4 |
| Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում | 129.0 | | |
| Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում | 50.0 | 20.0 | 40.0 |
| Գրասենյակային նյութեր | 90.0 | 20.0 | 22.2 |
| Վերապատրաստման և ուսուցման նյութեր | | | |
| Տրանսպորտայի նյութեր | 150.0 | 73.3 | 48.9 |
| Հատուկ նպատակային այլ նյութեր | 70.0 | | |
| Ընթացիկ դրամաշնորհներ | 80.0 | | |
| Այլ նպաստներ բյուջեից | 250.0 | | |
| Այլ հարկեր | | | |
| նվիրատվություններ | | | |
| Պարտադիր վճարներ | | | |
| Պահուստային միջոցներ | 400.0 | 195.3 | 48.8 |
| Շենքերի և շինությունների կառուցում | 1704.3 | | |
| Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | | | |
| Տրանսպորտային սարքավորումներ | | | |
| Վարչական սարքավորումներ | | | |
| Այլ մեքենաներ և սարքավորումներ | | | |
| Աճեցվող ակտիվներ | | | |
| Նախագծահետազոտական ծախսեր | | | |
| Այլ հիմնական միջոցներից մուտքեր | | | |
| ընդամենը | 6991.4 | 3451.1 | 49.4 |

Այգաբացի համայնքի ղեկավար՝ Ս. Վանեցյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբաց համայնք

# Ո Ր Ո Շ Ու Մ

10 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ , ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներով`

համայնքի ավագանին որոշում է`

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի 2017թվականի բյուջեի վարչական մասի 10-րդ բաժնի 7-րդ խմբի 1-ին դասի հոդված 4729-ից Հայրենական մեծ Պատերազմի, Արցախյան պատերազմի մասնակիցներին և համայնքի սեցիալապես անապահով ընտանիքներին տալ միանվագ դրամական օգնություն `ընդամենը 100000/մեկ հարյուր հազար/ դրամ:

1.Ֆահրադյան Արուսյակ -20000/քսան հազար / դրամ-Հայրենական Մեծ Պատերազմի մասնակից

2.Մանվելյան Սամվել -50000/հիսուն հազար/ դրամ - Արցախյան պատերազմի մասնակից

3.Ասմարյան Նունուֆար -30000/երեսուն հազար/ դրամ - սոցիալապես անապահով ընտանիք

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԹՈՒՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

2. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

3. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՈՎՍԵՓ

4. ՄՄՐՅԱՆ ԳՆԵԼ

5. ՌՈՍՏՈՄՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆԻԿ ՎԱՆԵՑՅԱՆ

10 ապրիլի 2017թվական
գ. Այգաբաց